«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Նատելլա Դանիելյան
Քաղաքագիտության մագիստրոս
natella.danielyan@gmail.com
Գիտ. ղեկ.՝ բ.գ.դ., պրոֆ. Գ.Քեռյան

20-րդ դարում տեղի ունեցած երկու համաշխարհային պատերազմները, սառը պատերազմն ու ԽՍՀՄ տապալումը կերպափոխեցին միջազգային հարաբերությունների ողջ բովանդակությունը: Ժամանակակից աշխարհում, ազգերի ու պետությունների փոխհարաբերությունների բնույթը կարելի է որակել, իբրև ընթացք դեպի գլոբալացում, որը զերծ չէ բախումածին հետևանքներից: Այդպիսի հետևանքներից են էթնիկ հակամարտությունները: Էթնոքաղաքական բախումներից զերծ չմնաց հետխորհրդային տարածաշրջանը, որտեղ լայնածավալ պատերազմի վերաճեց հայ-ադրբեջանական հակամարտությունը:

Քաղաքական վերլուծաբանները տարբեր տեսանկյուններով են փորձում բացատրել էթնոքաղաքական հակամարտությունների էությունը:

Տիշկովը էթնոքաղաքական հակամարտությունները, ինչպես քաղաքացիական և քաղաքական ցանկացած զինված բախում, դիտարկում է, որպես երկու սուբյեկտների՝ էթնիկական խմբերի հակամարտություն:[1]

Դրոբիժևի կարծիքով էթնոքաղաքական հակամարտությունների պատճառները պետք է փնտրել ոչ թե էթնոսների տարբերության, այլ սոցիալական հիմնախնդիրների մեջ:[2]

Գ.Տ Թավադովի բնորոշմամբ էթնիկական հակամարտությունը բոլոր դեպքերում քաղաքական է, որովհետև մշակութալեզվական, սոցիալտնտեսական և ուրիշ ազգային նպատակներին
հասնելու համար, որպես կանոն, օգտագործում են քաղաքական ուղիներն ու մեթոդները:[3]

Ինչպես գիտենք, սոցիալական կառուցվածքի ամենահին ու ամենակայուն դերակատարը ազգն (nation) է: Պատմական զարգացմանը զուգընթաց աշխարհի տարբեր տարածաշրջաններում, իսկ հետագայում նաև առանձին երկրներում առաջացել են պատճառական տարբեր կապեր էթնիկական հակասությունների ծագման համար, որոնք բնականաբար վերածվել են նաև բացահայտ հակամարտությունների:

Այս գործընթացում առավել դժվարին կացության մեջ են հայտնվում համեմատաբար փոքր ազգերը, ժողովուրդները, էթնոսները, որոնք պայքարում են ինքնորոշման, ազգային լեզվի, մշակույթի, սովորույթների ու ավանդույթների պահպանման համար:

Սիկևիչը իր «Էթնիկական հակամարտություններ» աշխատության մեջ շեշտադրում է վարքագծային մասերը, վերլուծելով փոխհատուցվող էթնիկական քաղաքականությունը:[4]

---

[1] Тишков В., Общество в вороженном конфликте М. 2001, стр 520
[2] Дробижева Л., Аклаев А., Кортеева В., Солдатова Г.У, Демократизация и образы национализма в РФ. 90-ы годов, М., стр 88-92
[3] Тавадов Г., Этнология, .М. 2002г.стр 308-309
[4] Сикевич З., Социология и психология национальных отношений: Учебное пособие.- СПб.: Изд-во Михайлова В.А., 1999.- 203 с.

Ըստ Ա.Ռ Ակլաևի, սոցիալական կոնֆլիկտների հիմնավորման առումով քաղաքագետների կարծիքները երկուսն են. սոցիալական հակամարտությունը համարվում է կայացած, երբ սուբյեկտների միջև եղած հակասությունները վերածվում են բացարձակ բախումների և սոցիալական հակամարտությունը հիմնավորվում է սուբյեկտների հակասությունների սկզբնավորումով: Այսինքն՝ հակամարտությունը բովանդակում է նաև այն ժամանակահավածը, երբ սուբյեկտների միջև եղել են հակասություններ առանց բիրթ ուժի կիրառման: Ակլաևը այս երկու կարծիքները կիրառելի է համարում նաև էթնոքաղաքական հակամարտությունների ծագման և էսկալացիայի գործընթացի մեկնաբանման համար՝ նախապատվելի համարելով երկրորդ կարծիքը:[1]

Հակամարտությունների պատճառահետևանքային կապը պետք է փնտրել ազգերի ու ժողովուրդների պատմականորեն ձևավորված հարաբերություններում: Հարցի այդպիսի դրվածքը բարդ է այն պատճառով, որ պետք է խիստ սահմանազատել էթնիկական և քաղաքակրթական հակամարտությունները: Էթնիկական հակամարտությունները ծագում են տարբեր էթնոսների միջև: Էթնիկական հակամարտությունների շարքին կարելի է դասել օրինակի համար Դաղստանի տարբեր էթնոսների միջև տեղի ունեցող ընդհարումները:

Ըստ Ջ. Ռոտչիլի՝ 20-րդ դարի 70-80-ականներին «աշխարհի երկրների գրեթե կեսն ընկղմված էր էթնիկ պայքարի մեջ»:[2]

Հանրության աչքի առաջ ծավալվել և ծավալվում են էթնոքաղաքական հակամարտությունների այնպիսի սցենարներ, ինչպիսիք են Բալկաններում, Արևելյան Եվրոպայի Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում, նախկին ԽՍՀՄ տարածքներում ծագած բախումները: Ընդ որում՝ ըստ որոշ կանխատեսումների՝ հակամարտությունների աշխարհագրությունը ունի ընդլայնվելու միտում:

Համաձայն Զ.Բժեզինսկու՝ 20-րդ դարի 90-ականների սկզբներին էթնոքաղաքական հակամարտությունների զոհ է դարձել ավելի քան 33 մլն. մարդ:[3]

Եթե փորձենք առանձնացնել հետխորհրդային տարածաշրջանի էթնիկ հակամարտությունները, ապա կտեսնենք, որ դրանք առավելապես դրսևորվել են ազգերի ինքնորոշման և անկախության համար պայքարի սկզբունքի հիման վրա:

Անդրկովկասը՝ որպես նախկին խորհրդային միության մաս, ինչպես պատմության տարբեր ժամանակաշրջաններում, այնպես էլ միության քայքայումից հետո առավել աչքի ընկնող հակամարտող տարածաշրջաններից մեկն է: Հայկական բարձրավանդակում են սահմանազատվում արևմտյան և արևելյան, հյուսիսային և հարավային քաղաքակրթությունները: Բացի դրանից Հայկական լեռնաշխարհում են մերձենում քրիստոնյա և մահմեդական աշխարհները: Տարածաշրջանը դարեր ի վեր եղել է տարբեր կայսրությունների պատերազմների և ռազմարշավների թատերաբեմ: Բացի դրանից տարածաշրջանի էթնիկ և կրոնական բազմաշերտությունը հարևան երկրների համար բարենպաստ հնարավորություն է ստեղծել «բաժանիր և տիրիր» սկզբունքին հետևելու և Հայկական լեռնաշխարհի տարածքները նվաճելու համար:

Սովետների լուծարումից հետո կրկին վեր հառնեցին միջէթնիկ բոլոր հակամարտությունները, որոնք մինչ այդ գտնվում էին գաղափարախոսական թմբիրի մեջ՝ պարբերաբար ճնշվելով կուսակցապետական երկաթե բռունցքով:

---

[1] Аклаев А., Этнополитическая конфликтология, М., 2008, стр 21-22
[2] Rothschild J..Ethnapolitics: A Conceptual Framwork, N. Y. 1981. p. 27
[3] Brzezinski Z. Post – Communist Nationalism (Foreign Affairs, 1989/ 1990 vol. G8, N. 5, p. 46)

Զուգահեռներ տանելով աբխազական, հարավօսական և արցախյան հակամարտությունների միջև՝ մենք տեսնում ենք, որ դրանք իրենց բնույթով դասվում են էթնոքաղաքական հակամարտությունների շարքին: Երեք պետությունների ընդհանրությունը կայանում է նրանում, որ պետականության ստեղծման խնդիրը գլխավոր հիմնահարցերից մեկն էր: Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացը շարունակում է մնալ Հայաստանի արտաքին քաղաքականության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Կարևոր է Արցախի անկախության միջազգային ճանաչմանը ուղղված բոլոր ջանքերի հետ միասին, վերջինիս վերադարձնել հակամարտության կարգավորման բանակցային գործընթաց, որպես լիիրավ կողմ:

Միևնույն ժամանակ Արցախի Հանրապետությանը հաջողվել է քսանվեց տարիների ընթացքում, փաստական անկախության ժամանակաշրջանում, իր շուրջը քաղաքական միջավայր, ներքին համախմբվածություն ստեղծել, ունենալ ինքնուրույն կառավարվող պետական ինստիտուցիոնալ համակարգ, և տնտեսական անհրաժեշտ միջոցներ: Արցախում բարձր աստիճանի է հասել ներքին համախմբվածությունը, որի համար զորեղ ազդակ է արտաքին սպառնալիքի առկայությունը:

Ապագա վայրիվերումների հնարավորությունը ենթադրելի է, քանի որ Ադրբեջանը մինչ այսօր էլ՝ անտեսելով պատմական բոլոր փաստերը, փորձում է իր ներքին հիմնախնդիրները լուծել իր իսկ ժողովրդի աչքին ձևավորելով «արտաքին թշնամու» կերպար: Մի կողմից հասարակության տրամադրությունները Ադրբեջանում միտված են սոցիալական անտարբերության ձևավորմանը, քանի որ տնտեսական ու սոցիալական կյանքի կտրուկ վատթարացումը հանգեցնում է այն բանին, որ քաոսային իրավիճակի խորացման հարմարվողական միտումներ են ձևավորվում: Օրենքի, կարգ ու կանոնի բացակայությունը բերել է անձնական անապահովության զգացողության ձևավորմանը, որը ստվերում է ավելի լայնաբնույթ քաղաքական խնդիրները:

Ադրբեջանի կողմից այսօր էլ մենք տեսնում ենք հայատյաց քաղաքականության վառ դրսևորումներ: Դրա վառ օրինակներ են 2016թ. ապրիլին ձեռնարկած ռազմական հանցագործությունները՝ խաղաղ բնակչության խոշտանգումները, որոնք, ցավոք, միջազգային հանրության կողմից չեն արժանանում համապատասխան դատապարտանքի: Միևնույն ժամանակ, Ռուսաստանը շարունակում է հետխորհրդային տարածաշրջանում պահպանել պատմական, աշխարհաքաղաքական, տնտեսական դերակատարությունը:

Նատելլա Դանիելյան

ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր. *հակամարտություն, էթնոքաղաքական, Հայկական բարձրավանդակ, անկախություն, ինքնորոշում*:

Նախկին ԽՍՀՄ տարածքներում տեղի ունեցող զարգացումները վկայում են տարածաշրջանում կործանարար միտումների մասին, որոնք կարող են լայնածավալ նոր պատերազմների պատճառ դառնալ:

Ազգերի պատմական տարածքների այլ պետություններին անօրեն բռնակցելն ու մասնատելը, կարող են նոր սպառնալիքների սկիզբ հանդիսանալ: Հիմնահարցի ընդգրկունն քննարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ Անդրկովկասի երեք հանրապետություններում պետականության ստեղծման համար պայքարը ընթացել է անջատված պետությունների կողմից էթնիկական զտումների քաղաքականության միջոցով: Այսօր էլ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրը շարունակում է մնալ արդիական:

Нателла Даниелян

О ПРОБЛЕМЕ РАСКРЫТИЯ СУЩНОСТИ ЭТНОПОЛИТИЧЕСКИХ КОНФЛИКТОВ

Ключевые слова: *конфликт, этнополитическое, армянское нагорье, независимость, самоопределение*

Текущие процессы на постсоветском пространстве свидетельствуют о деструктивных тенденциях в регионе, что может привести к полномасштабной войне.

Незаконное отсоединение исторических территорий может стать причиной новой угрозы. Всестороннее обсуждение этого вопроса позволяет сделать вывод о том, что борьба трех закавказских республик за создание государственности шла с помощью этнической чистки со стороны отделившихся государств. До сих пор вопрос о международном признании Республики Арцах остается актуальным.

Natella Danielyan

THE DISCLOSURE OF THE ESSENCE OF ETHNOPOLITICAL CONFLICTS

Key words: *conflict, ethnopolitical, Armenian highland, independence self-determination*

The ongoing processes in the post – Soviet space testify to the destructive tendency that can lead to a large – scale war.

The unlawful separation of historical lands may cause a new threat. The discussion with regard to that question allows us to conclude that the struggle of the three transcaucasian republics for the creation of statehood has undergone ethnic cleansing carried out by the separated republics. The international recognition of the Republic of Artsakh still remains relevant.